ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 23 սեպտեմբեր 2018թ.

Քվեարկության հայտ 5

1 Նույնականացում

2 Գրանցում

3 Քվեաթերթիկ

4 Քվեարկություն

5 Քվեատուփ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1
Նույնականացում

1. Քվեարկել կարող ես պատկերված փաստաթղթերից որևէ մեկով

2. Ներկայացրու անձը հաստատող փաստաթուղթը մասնագետին

3. Մասնագետը ստուգում է քո ինքնությունը

4. Անձը հաստատող փաստաթուղթը ներմուծվում է սարքավորման մեջ

5. Սարքավորման էկրանին կպատկերվի տվյալներդ

6. Մասնագետի հրահանգով ներմուծիր աջ ձեռքիդ ցուցամատի մատնահետքը

7. Սարքավորումը տպում է կտրոնը

8. Մասնագետը կտրոնը և անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում է ընտրողին

Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2
Գրանցում

1. Մոտեցի՛ր գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին և ներկայացրու կտրոնը

2. Հանձնաժողովի անդամը կտրոնիդ վրա պատկերված համարով գտնում է քո անունը ընտրողների ցուցակում

3. Ստորագրի՛ր ընտրողների ցուցակում քո տվյալների դիմաց

4. Հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը քո ստորագրության դիմաց

5. Այնուհետև նույն կնիքով կնքում է կտրոնդ

6. Հանձնաժողովի անդամը քեզ է վերադարձնում կտրոնդ

Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3

Քվեաթերթիկ

1. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար տրամադրող հանձնաժողովի անդամին ներկայացրու՛ կտրոնդ



2. Ստացի՛ր 1 քվեաթերթիկ և 1 քվեարկության ծրար

Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

4
Քվեարկություն

1. Քվեարկում ես անձամբ՝ առանց այլ անձի ներկայության քվեարկության խցիկում



2., 3. Քվեարկության խցիկում քո նախընտրած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվան դիմացի քառանկյունում դիր այս՝ V նշանը



4. Քվեաթերթիկը ծալի՛ր երկու տեղից, դեպի ներս

5. Ծալված քվեաթերթիկը դի՛ր ծրարի մեջ

6. Կտրոնդ չմոռանաս քվեարկության խցիկում

Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

5

Քվեատուփ

1. Մոտեցի՛ր քվեատուփին և հանձնաժողովի անդամին հանձնիր կտրոնդ



2. Հանձնաժողովի անդամը քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասոսնձվող դրոշմանիշ է փակցնում ծրարում գտնվող քվեաթերթիկին

3. Հետևի՛ր, որ ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցվի ծրարում գտնվող քվեաթերթիկին

4. Գցի՛ր ծրարը քվեատուփի մեջ, երբ հանձնաժողովի անդամը կբացի քվեատուփի ճեղքը

Շնորհակալություն քվեարկությանը մասնակցելու համար